

ՀԱՅՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.

New York, N. Y.

Vol. IV, 1894

«ՀԱՅՔ»-Ի ՀԱՍՑԵՆԷ ՈՐՊԷՍ ՅԱՌԱՋԱԳՈՅՆ

202 West 23d St. New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապստամբութիւն ի Հայաստան.—

Ձերբակալումն Հայ Ուսուցիչներու յԱյն-
թապ.— Անգլիացիւն Լինչ Հայկական Խնդրոյն
Վերայ.— Հայկական Խնդիրն. ի Թուրքիս.—
Խորմեան Լուարանի ՈԳԻՆ.— Հայ Լրագրութեան
Լուսատիպ պատկերն.— Նամակ ի Կիլիկիոյ—
Նամակ յափանց Եփրատայ.— Նամակ ի Թը-
րոյէ.— Ամերիկացիք և Ամերիկայի Հայերն.—
Հայք Օլպընիի Կրէնտ ժիւրիին առջև.— Տեղա-
կան և այլ և այլ Լուրեր:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Աժան Հապասի հեռագիր մի, (Սեպտ. 19)
Կասէ թէ Կարինէն 2,500 զօրք յղուած են Ռու-
սներու համար այն ապստամբութիւնն որ Մշոյ
կողմերն պայթած է. Առաջին ընդհարման մի
մէջ եօթանասուհ ապստամբք սպաննուած են:
Ապստամբք մեծ մասամբ Հայ են, մի քանին ալ
միւսիւլման:

Այս հեռագիր կրնայ բացատրել ուրիշ
կարգ մի լուրեր զոր ընթերցողք պիտի
գտնեն ներկայ Թուրք մէջ:

ՉԵՐԱՎԱՆՈՒՄՆ ՀԱՅ ՈՒՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ

ՅԱՆԹԱՊ

Այնթապէն առ Պորտի քարտուղարն՝ ի
Պոսթըն՝ ուղղեալ հեռագիր մի կը ծանուցանէ
թէ ամերիկեան զօլէմի Փրոմէսօրներն ձերբա-

կալուած են այն ամբաստանութեամբ իբր թէ
հայ յեղափոխականաց զաղտնապէս գործակից
են և իրենց ուսուցմամբք ապստամբութիւն կը
յարուցանեն կառավարութեան դէմ: Թուրք
կառավարութիւնն թող տուած չէ որ այս հե-
ռագիր յղուի իւր երկրէն, ուստի և հարկ ե-
ղած է թղթատարով յղել զայն ի Պուլկարիա
և ամտի հեռագրել. Ամերիկեան զեռպանատան
քարտուղարն յԱյնթապ գնացած է գործն քն-
նելու:

Յաւթ և ի մախատինս Թուրք կառավա-
րութեան պէտք է հռչակել թէ այն 5,000 ըուպ-
լիի զուհարն զոր Վեհ. Հայրապետն, ի ձեռն
Արտաքին Գործոց մախարարութեան, փոխադ-
րած է ի Կարին, սովեալ ժողովրդին բաշխուե-
լու համար, դեռ չէ կրցած բաշխուիլ, վասն զի
Կարնոյ վալըն կ'ասէ ս. առաջնորդին թէ բարձ-
րագոյն հրամանի պէտք ունի այդ զուհարն
յանձնելու համար:

Այս կը յիշեցունէ մեզ ուրիշ դէպք մի.—
Ամերիկայէն 1892ին գումար մի հանգանակ-
ուելով յղուեցաւ ի Պուլիս՝ տառապեալ Եզմիկ
եպ. Ապահումույն, և սակայն փոխանակագիրն
պարունակող համակն չհասաւ Գեր. Եպիսկո-
պոսին ձեռքն և ոչ ալ զրամն: Նոյն գումարին
յղուած ամսուն է, Յուլիսին, որ Ապահումի բան-
տարկուեցաւ Ոստիկանութեան Դուռն և Յուլիս
20էն ց19 Օգոստոս (տարեդարձ զահակալու-
թեան Համիտի) մնաց կալանաւորեալ, և այդ
վերջին թուականին տքսորուեցաւ յերսուս-
դէմ:

ԱՆԳԼԻՍՏԻՆ ԼԻՆՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՎԵՐԱՅ

Օտարներու գրչէն Հայկական խնդրոյն վերայ ոչ սակաւ յօդուածներ հրատարակեալ տեսած եմք 1877էն ի վեր, և առանց Հափաղանցութեամբ կրնամք յայտարարել թէ Լինչի ուսումնասիրութիւնն որ Յունիս, Յուլ. և Սեպտ. թուովք Քոնթէմփորէրի Րիվիւի հրատարակուեցաւ այս ամառ, է գերիվերոյ քան զլաւագոյններն: Մը Լինչ անձամբ ուղեւորած է և մեր երկիրն ուսումնասիրած է աշխարհագրական, ցեղագրական, տեղադրական, տնտեսական և քաղաքական տեսակետներէ, և իւրոյս բերած է ինչ ինչ իրողութիւններ՝ յոյժ կարեւոր մեր խնդրոյն ուղիղ բմբռնման համար: Մեք այդ պատուական ուսումնասիրութեան համառօտ թարգմանութիւնն տուինք «Հայքի» մէջ, յորմէ տեսան ընթերցողք թէ Հեղինակն բարձր համարում կը տածէ Հայոց մասին, սոցա յառաջգիւցածութիւնն օսմ. պետութեան կեանք կը համարի, Սուլթանին քաղաքականութիւնն կը քննադատէ, Անգլիոյ անտարբերութիւնն կը յանդիմանէ և յոյժ Հափաղանք և գործնական առաջարկներ կ'անէ Հայաստանի վարչութիւնն բարեկարգելու համար: Հայաստան աշխարհի անձկագոյն և անվիճելի սահմաններն կը նշանակէ հանդերձ որոշիչ հանգամանօք նորին, և այսպէս գիտական լուծում կուտայ այն հարցին զոր Եւրոպացիք կարող են անել թէ ո՞ր է բուն Հայաստան և ո՞ր գաւառաց համար բարեկարգութիւն կ'ուզեն կամ կրնան ուզել Հայք:

Յօդուածին մէջ կան մի քանի կետեր վիճելի, սակայն ընդհանուր առնելով յոյժ ընտիր և կարեւոր է աշխատութիւնն, որոյ համար ջերմագին շնորհակալութիւն կը պարտիմք ազատամիտ և գիտուն Անգլիացւոյն:

Լոնտոնի Տէյլի Նիւզէն կը տեղեկանամք թէ Էնկլիքիւի բաճտարկելոց 1700 արծակուած են, որք այլ և այլ պայմանաժամով բաճտարկութեան դատապարտուած էին: Եւ հրաման տրուած է վերաքննել զդատն այն 17 բանտարկելոց ևս որք մահուամբ դատաւճիռ ընդունած էին:

Տէյլի Նիւզ ևս խմբագրական կտորին մէջ ուր կը քաջալերէ Անգլիահայկական ընկերակցութիւնն, կ'ասէ թէ միմչև իսկ ի թուրքիա կրօնական հալածանքն ստիպուած է մեր օրերում սքողել ինքզինք, և թէ մեծապէս հաւատական է թէ օսմանեան բանտից մէջ հիւծող 1800 հոգիներու բոլոր յանցանքն այն է զի քրիստոնեայ և հայրենասէր են:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ

Գ. (վերջ) Ի ԹՈՒՐԿԻԱ

(Համառօտութիւն Հ. Յ. Պ. Լինչի յօդուածին որ ի Քոնթէմփորէրի Րիվիու թիւ Սեպտեմբերի)

Հայկական լեռնադաշտին թրքահայասակ գաւառաց բնակչաց ճշդամբարձ թիւն գտնելու համար առած եմ հետեւեալ կառավարութիւններն կամ կառավարական բաժանումներն. ամբողջ կարնոյ կուսակալութիւնն. Վանայ կուսակալութեան այն մասն որ կը կազմէ Վանայ Սանճազն, Բաղէշի ամբողջ կառավարութիւնն՝ ի բաց առեալ Սէրթի Սանճազն որ դաշտագետնին կը վերաբերի: Յարեւմտից ներս առած եմ Տիգրանակերտի կուսակալութեան այն ժողով մասն որ Բալուայ գաւառակն կը կազմէ, և ամբողջ Յարբերլէի կուսակալութիւնն որ կը պարունակէ զՏէրսիմ, ի բաց թողնով Ռալաթիոյ Սանճազն: Այսպէս կ'ունենամք 42,000 քառակուսի մղոն տարածութիւն, որոյ քով կրնայ դրուիլ 22,000 մղոնն ալ որ լեռնադաշտին ուսական բաժինն կը կազմէ: Դուրս թողած եմ Վանայ Հէքքեարի Սանճազն, զոր ուրիշներ պարունակած էին Հայ սահմանին մէջ: Մեծ սխալ է այդ, զի Հէքքեարի դաշտագետնին կը վերաբերի և Գրդաց ու Ասորոց բնակարան է:

Վիճակագրական հաշիւն զոր պիտիյառաջ բերեմ այժմ, արդիւնք է տաժանաքիրտն հետաքննութեան: Գիտական սկզբունց համաձայն կատարուած աշխարհագիր չկայ, ուստի և թիւերն մերձաւորապէս միայն ուղիղ կրնան լինիլ: Հայոց Պատրիարքարանէն տրուած հաշիւն, որ Պլիու Պուքին մէջ ալ մուտ գտած է, յատկապէս քաղաքական նպատակի ծառայելու մտօք յարդարուած է և կրնայ բացէ ի բաց մերժուիլ: Պարտիմ խոստովանիլ թէ համոզուած եմ որ երկրին ամբողջ ժողովուրդըն աւելի է քան զոր ես կը դնեմ ի ստորեւ: Իմ թիւերն ամեն մէկ քառակուսի մղոնի համար, միջին հաշուով, 30 հոգի կը ցուցնեն. ուսական գաւառաց մէջ, իբր 47:

Ահաւասարկ Հայաստանի լեռնադաշտին
օսմանեան բաժնին մարդահամարն—

Միւսիւլմանք	
Թուրք (սիւննի)	442,946
Քուրդ (սիւննի և գզլպաշ)	410,813
Քրիստոնեայք	
Հայք (լուսաւ . փոքր թուով Հռով- մէական և բողոք.)	387,746
Յոյնք	4,604
Այլք	6,733
Գումար	1,252,811

Օգտակար կը լինի այս թիւերուն հետ
գումարել Հայաստանի ռուսական մասին
թիւերն ևս և ամբողջն դիտել—

Հայ	906,984
Թուրք	489,931
Քուրդ	479,676
Թաթար	306,310
Յոյն	52,367
Ռուս	28,844
Այլք	84,439
Գումար	2,348,551

Պէտք է յաւելումք սա կարեւոր գի-
տելիքն թէ Թուրք ասելով բոլորովին ցե-
ղաբանական իմաստ չեմք ուզեր տալ :
Կարնոյ կուսակալութեան հիւսիսային մա-
սանց բնակիչներն, օրինակի համար, Քուրդ
չեն, բայց ճշմարիտ Թուրք ալ չեն . ինձ
հաւատալի երեւցուցին թէ նոցա մեծ մա-
սըն Վրացի ընտանիքէ ծագած են : Լեռ-
նադաշտին վերայ կան մահմետականներ
որք տիրող կրօնն կը դաւանին բայց հա-
յացեղ են : Կարնոյ և Օլթիի միջեւ գըտ-
նուող Թորթուս գաւառի միւսիւլմաններն
նոյնպէս հայածին են :

Լեռնադաշտում բնակեալ Քուրդք լե-
զուի և դաւանանքի տարբերութեամբ կը
զանազանին : Սեբաստիոյ մօտերէն սկսեալ
մինչև անդր քան զՄալաթիա, և ընդ մէջ
երկու բազկացն Եփրատայ մինչև մերձ ի
Մուշ բնակող Քուրդք, թէպէտ պաշտո-
նական ցուցակներու մէջ իբրեւ միւսիւլ-
ման նշանակուած են, իրօք ոչ միւսիւլ-
ման կրօնին կը ծառայեն և ոչ ալ իրենց
մերձաւոր ցեղերուն լեզուն կը խօսին : Այդ
գզլպաշներն ասելով թիւն կը տածեն Թուրք
կառավարութեան դէմ և գոյ եղող կար-
գաց հասարակաց հակառակութեան շնոր-
հիւ կը մղուին դէպ ի քրիստոնեայս , որոց
կրօնն կը յարգեն ալ : Սոքա Քրդաց իբր
մէկ երրորդն կազմելով՝ թուական բաւա-
կան արժէք ունին : Ի Տէրսիմ, այս Քրդեր

միշտ դիմադրած են և կը դիմադրեն թր-
քական լծին :

Կրնամք նկատել իբրեւ կորիզն Հայկա-
կական ինքրոյն ի Թուրքիա այն դժուա-
րութիւններն որք կը ծագին Քրդաց ներ-
կայութենէն ի լեռնադաշտին : Թուրք կա-
ռավարութիւնն միշտ չափազանցած է Քր-
դաց կարողութիւնն թէպէտ չարի թէպէտ
բարւոյ համար, և պատմութիւնն կը ցուց-
նէ թէ սխալ է թրքական այդ քաղաքա-
քականութիւն : Ռուսընդ թուրք պատերազ-
մաց մէջ Քուրդ կամաւորք ոչ օգտակար
եղան և ոչ պատուաբեր թուրք բանակին :

Այժմու անկանոն քուրդ հեծելազօրաց
նոր անուն մը տրուած է — «Հաւիտիյէ» :
(30 զօրախումբ, իւրաքանչիւրն անուա-
նապէս 60 հոգիէ բաղկացած) : Քրդերն
կրթելու փափաքն գովելի է, բայց Սուլ-
թանն կը սխալի կարծելով թէ այնպիսի
մեղմ եղանակաւ կրնայ զանոնք ենթարկել
բանակին կանոնաւոր կարգապահութեան :
Իբրեւ զօրական անգոհացուցիչ լինելէ
զատ այդ Քրդեր վերջին ծայր աղետաբեր
են Հայոց : Նոքա իրենց ապրուստն Հայոց-
մէ կը հանեն, ունենալով նորակերպ հրա-
ցաններ ի ձեռին, մինչ կառավարութիւնն
չնական և անգութ նախատեսութեամբ ա-
մէն զէնքէ զրկած է զՀայո : Երբ Քուրդն՝
ձեռքն արիւնաներկ բռնուի, կը մերժէ
քաղաքային դատարանն, և կը պահանջէ
որ զինուորական ատենին յղուի իբր Հա-
միտիյէ գինուոր : Ի հարկէ սճրագործն ան-
պարտ կը դատուի զինուորական իշխա-
նութենէն և գանգատող Հայն ալ նոր և
չարաղէտ այցելութիւն մի կը կրէ առանց
ճիկ հանելու այս անգամ :

Հայք, բազմատմամբ միւսիւլման ըը-
նակչաց, Վանայ կուսակալութեան մէջ
(Հէքքեարին դուրս) աւելի գերա կշիռ են
թուով քան ուրիշ ո և է կառավարութեան
մէջ : Վանայ քաղաքին մէջ մէկ միւսիւլ-
մանի դէմ երկու հայ կայ : Բազէշի կա-
ռավարութեան մէջ նոքա մեծամասնու-
թիւն են Մշոյ մօտերն, և Պուլանըզիյուու-
թի գաւառին մէջ, Վանայ ծովուն հիւսիս-
արեւմտեան կողմն : Միւս կողմանէ, միւ-
սիւլմանք աւելի բազմաթիւ են քան զՀայս
Խարբերդու սանճագում և Բալուայ գա-
ղայում : Կարնոյ կառավարութեան մէջ
հազիւ ո և է տեղ կայ ուր Հայք փոքրա-
մասնութիւն չլինին : Այսու ամենայնիւ
չատ կը խաբուիմք եթէ Հայ տարրին հա-

մեմատական զօրութիւնն հաշուեմք նորա թուական ստորագասութեան նայելով: Երկրին քան զամենայն բարեբեր մասն Հայոց ձեռքն է. Վան, Պուլանըզ, Մուշ, Խարբերդ են Հայ գիւղաբնակութեան գլխաւոր կայաններն, գիւղաբնակութիւն որ միւսիւրմանաց չափ տոկուն է և շատ աւելի աշխատասէր և յառաջադէմ: Հայոց մէկ առաւելութիւնն ալ իրենց աշխարհագրական նպաստաւոր գիրքն է վերաբերութեամբ թրքաց և քրդաց. Հայ բնակութիւնն կը կազմէ զանազան հոծութեամբ զանգուած մի, որ յարեւելից յարեւմուտս լեռնադաշտին կը տարածուի, և կրնայ աւուրիլ, ընդհանուր կերպով մի, թէ միւսիւրման բնակութեան երկու ճիւղերն իբրեւ սեպով մի յերկուս կը ձեղքէ: Աւելին կայ. Հայ տարրին համերաշխութիւնն, թէ՛ քաղաքական և թէ՛ ընկերային տեսակետով, իրողութիւն մ'է զոր պէտք է չանգիտանալ: Վերջապէս պարտ է յիշել այն բարձր գիրքն զոր Հայն արդէն բռնած է երկրին անտեսական կարգին մէջ, և այն իրողութիւնն ևս թէ Հայն յոյժ արագ բազմացման ընդունակ է մեղմագոյն պայմանաց տակ: Մաշած և ինկած ճարտարարուեստութեան մեքենայն միայն Հայուն ձեռքով կը գործէ. Հայուն յառաջդիմութիւնն երկրին յառաջդիմութիւնն ասել է, նորա ի բաց վտարումն պատճառ է երկրին փտութեան: Սակայն դժբաղդաբար գաղթականութեան հոսանքն ամ քան զամ կը յորդէ դէպ արտասահման:

Գանք այժմ եզրակացութեանց:

(1) Շատ անորոշ է Պէռլինի գաշնագրին այն խօսքն թէ բարեկարգութիւն պէտք է մտցուի Հայերէ բնակեալ գաւառաց մէջ. այդ տրամադրութեան տառական գործադրութիւնն այնպիսի ընդարձակ շրջանի վերայ պէտք կը լինի տարածել որ ներկայ պարագայից մէջ անգործադրելի և տպարդիւն է: Թրքահայոց (որոց թիւն իբր մէկ և կէս միլիոն է, ոչ թէ 3 միլիոն, որպէս կը պնդեն) իբր կէս միլիոնն թրքահայ լեռնադաշտում կը բնակին, մընացած 1 միլիոնն ալ ի Փոքր Ասիա և ի Կ. Պոլիս: Հայոց յեղափոխական վերջին խլրտմունք որ Հայաստանէն դուրս, Սամսունի կողմերն տեղի ունեցան, չեմ կարծեր թէ ինքնաբեր էին և ներքնածին, զի այն կողմանց Հայոց վիճակն տեւական դժգոհութեան պատճառ չունի: Ծայրայեղ խս-

տութիւնն որով բուն լեռնադաշտին վերայ տեղի ունեցած պայթմունքն 1890ին զըսպուեցան, նկուն արին բուն Հայաստանեայց ոգին, և ինչքան ալ խոշոր և իրական են անիրաւութիւնք որոց կը տանին նոքա, սովորեցան տանիլ լռիկ մնչիկ: Յեղափոխական կուսակցութիւնն, Վանայ, Մշոյ, Կարնոյ Հայերէն նեցուկ գտնելէ յուսահատած՝ տեղափոխեր է իւր ձգունքն Փոքր Ասիոյ խաղաղ քաղաքներուն մէջ, ուր կը գործէ կոյս հողոյ վերայ: Սակայն Փոքր Ասիոյ Հայոց վիճակն չէ որ Հայկական դատին իրականութիւն կուտայ և կընծայէ նմա բանաւոր նպատակ: Բաւէտ Հայ լեռնադաշտին դառնացած քաղաքական կացութիւնն և այդ կացութեան կապուած որոշ քաղաքական ինքիւրներն են որ կ'ընծայեն Հայ դատին միանգամայն արդարացումն և հիմնաւորութիւնն հաստատուն իրողութեանց վերայ:

(2) Ոչ կրօնական ազատութիւնն այլ քաղաքական հաւասարութիւնն է որ կը զլացուի քրիստոնէից, և յաճախ քաղաքական ստորակայութեան լուծն թօթափելու ջանքերու հետեւութեամբ է որ Հայոց յարաբերութիւնն ընդ տիրող ցեղին կը դառնանայ: Ի նպաստ քաղաքական հաւասարութեան հռչակուած հրովարտակը մեռեալ տառ մնացեր են: Եթէ այդ հրովարտակը ի գործ դրուէին, Թուրքիա նոր կեանքի շրջան մի կը մտնէր, և իրեն հզօր նեցուկն կը լինէին Հայերն:

(3) Հայ լեռնադաշտին վարչութիւնն, ուրիշ գաւառաց թրքական վարչութեան հետ իսկ բաղդատելով, վերջին աստիճան վատթար է: Արհաւիրք կը թագաւորեն անդ Հայոց վերայ թէպէտ և նոքա թուով փոքրամասնութիւն են և բնաւ դէնք չունին: Քերթուածոց անմեղագոյններն, երգի աննշան մրմունջքն իսկ արգիլուած են. և ես հակամիտեալ եմ հաւատալու թէ ոչ սակաւ ապստամբական խլրտմունք դիտմամբ կը չափազանցուին և մինչև անգամ յատկապէս կը հնարուին ի ձեռն նոյն իսկ կառավարչաց՝ ա'յն նպատակաւ որ նախնաձաւորութեան անուն ստանան: Եւ այս կառավարական եղանակն Դրան հաճելի է: Օսմ. կառավարութիւնն այս եղանակն ընդունելով իւր պետութեան գերազմանն կը փորէ:

(4) Հայկական գաւառաց կառավարութեան համար երկու ծրագրեր կան, մին

Նուպար Փաշային, միւսն՝ Հայ պատգամաւորութեանն ի Պէտլին: Կարծեմ այս երկու ծրագրեր ևս երկու առարկութեանց առջև բաց են. մէկ մի որ Հայոց թիւն գերակշիռ կը դնեն, և կը յանձնարարեն Հայ ընդհանուր կառավարչի մի անուանումն՝ երաշխաւորեալ պաշտօնավարութեամբ: Երկրորդ, Հայ պատգամաւորք ունել ունէին տալաւ ի ձեռին ուր ցուցուած էր աշխարհագրական սահմանն որոյ Համար կը խօսէին, այլ երբէք չներկայացուցին որոշ ըմբռնում մի այն սկզբանն որոյ Համեմատ սահմանն պէտք էր որոշել: Իմ նը պատակս եղած է սոյն սոսուճնափրութեան մէջ լոյս սփռել այդ կետերու վերայ: Նկատելով բնակչաց բաղադրութիւնը և նախապաշարմունքն ու թշնամութիւններն, չեմ կրնար չխորհիլ թէ վարչական նորոգ դրութեան մի Համար Հայ կառավարիչ մի՞ իւր կրօնով և ցեղով՝ մեծ անառաւելութիւններ պիտի ունենայ: Կրնամ յաւելուլ թէ ազդեցիկ Հայեր ևս, երբ ի Հայաստան էի, Համակարծիք գտայ ինձ այս մասին: Կարելի է յիշել մի քանի մահմետական պաշտօնեաներ, թրքական ծառայութեան մէջ բարձրադիր, որք ապացոյց տուած են կարող կառավարչութեան, և որք լաւ յարմար են նոր գաւառին վարիչ լինելու եթէ երբէք իրականանայ: Եւ տարակոյս չկայ թէ մէկ ընդհանուր կեդրոնէ պէտք է կառավարուի ամբողջ լեռնադաշտն, և կեդրոնն, ամենայն յարմարութեամբ, կրնայ լինիլ Ախլաթ, Վանայ ծովուն հիւսիս-արեւմտեան ափն: Անգլիոյ պարտքն է պնդել որ այս այսպէս լինի, և եթէ Դուռն չհամոզուի այսպիսի վարչական բարեկարգութեան մի առաւելութեանց, պէտք է լրջօրէն ճիգ թափեմք թուրք կառավարութեան քով որպէս զի յարմար պաշտօնեաներ անուանուին Կարնայ, Բաղիչոյ և Վանայ Համար: Եթէ դուռն չանսայ, Հաւանական է որ ներկայ դժուարութեան լուծումն պիտի վերջապէս գտնուի որոշ երաշխաց ներքև առանձին նահանգի մի կազմաւորման մէջ:

«ԱՐԱ»ի առ մեզ հարցիմ պիտի պատասխանեմք զալ թուով:

ԽՐԻՍՏԵԱՆ ԼԱՐԱՆԻ ՈԳԻՆ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ Մ.Ս. ԳԱՅՐԻԷԼԵԱՆԻ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Ի Հանդիսի բացման Խ. Լսարանի

Ի 1 Սեպտ. 1894

Ի Նիու Եորք

Պատ. ատենապետն բացատրեց թէ իմչպէս և իմչ պիտի խօսուի ու լսուի Հոս, ինձ կը մնայ ասել թէ ինչ պիտի լինի Ոգին Լսարանիս, վարժարանիս:

Խրիմեան Լսարանիս ոգին պիտի լինի յիշող և երախտագիտութեամբ: Մեք չպիտի աստէն Հպարտ «Թէորիա»ներու իբրեւ բարձրաբերձ աշտարակի գագաթէն վար նայիմք և մեր եկեղեցական ու աշխարհական գործիչներն գաճաճ տեսնեմք. և ոչ պիտի յանդգնիմք ասել թէ ո՛վ որ մեզի չի միանար, ազգասէր չէ, ո՛վ որ մեզի պէս չի հաւատար, «կոյր» է. ոչ, ո՛չ: Մեք պիտի ճանաչեմք երախտագիտութեամբ և պիտի խոստովանիմք Համարձակ ամեն գործիչի և ամեն ընկերութեան ալ արժանիքն ու ծառայութիւնն:

Մեր այս դպրոցի ոգին պիտի լինի հայկական: Չայս ասել կրնայ թուիլ աւելորդ, բայց դժբաղդաբար չէ աւելորդ: Գիտէք թէ ազգային ոգւոյ հակառակ մի ոգի սկսած է մուտ խնդրել մեր ազգի մէջ մի քանի ուսանողներու միջոցաւ, որք ընդհանուր եղբայրութեան, տնտեսական և քաղաքական կատարեալ հաւասարութեան բարձր խոհականն կը յեղյեղեն, և կուտան պարզամտաց ոմանց յուսալ թէ պիտի վերաստեղծեն այս աշխարհս, պիտի ընուն ձորերն, պիտի խոնարհեցունեն լեռներն, և կատարելապէս տափակ, դիւր աշխարհ մի պիտի յօրինեն՝ անմահ բնականին, ըստ իւրեանց երեւակայութեան, անվիշտ, անչարիք և բարօրիկ: Մեք չեմք կրնար հաւատալ թէ աշխարհս տափակցունել կարելի է, և ոչ ալ կը հաւատամք թէ լաւագոյն պիտի լինէր եթէ կարելի լինէր. հետեւապէս սոսիալիստներու քաղցր երազն մեզ բնաւ չի հրապուրեր: Մի ուրիշ տեսակետով՝ վտանգաւոր անգամ կը թուի այն, զի եթէ կարենայ թափանցել մեր երիտասարդաց սէջ, անվրէպ պի-

տի տկարացունէ և պիտի սպաննէ նոցա ազգային ոգին: Յեւրոպա արդէն փորձն տեսնուած է Ֆռանսացի, Գերմանացի և այլ սոսիալիստներու ոգւոյն վերայ: Ազգ մի չէ կարող երկու իտէականի ծառայել, ինչպէս մարդ չէ կարող երկու տերանց ծառայել. Ուրեմն մեք ի բաց պիտի մերժեմք ընկերվարական խմորն և պիտի մըշակեմք ի մեզ ազգայինն. զի ազգայնութեան ոգին է որ մեր դարուն մէջ զարգանալով ծնունդ տուած է Յունաստանի, Սերպիոյ, Ռումանիոյ, Իտալիոյ, Գերմանիոյ և Պուլկարիոյ, նոյն ոգին է որ պիտի կրնայ վերածնել նաև զՀայաստան: Ի բաց ուրեմն ի մէջն այն օտարոտի և անիրազործելի իտէականն որ մեր ազգի զաւակներն իրարմէ բաժնելու, զգացմամբ և խորհրդով և ձգտումով տարբերելու և մեր միութիւնն քայքայելու կրնայ ծառայել:

Մեր ոգին պիտի լինի նաև յեղափոխական: (Ծափք): Զայս ևս ասել աւելորդ պիտի համարէի եթէ այլանդակ զրոյցներ չըջարեամք չլինէին ձեր մէջ՝ իբր թէ անցուկն մոռցուկ եղած լինէր ինձ: Ի՞նչ, միթէ կարելի՞ է մոռնալ այն դէպքերն որոց լուրն իբրև շանթ ինկած ու բռնկեցուցած է հոգիս թուրք կառավարութեան դէմ: Միթէ կարելի՞ է մոռնալ այն մէկ դէպքն, նշանաւորն ու նշանակիչն քան զայն ամենայն, որ մեր ազգի մեծ կէտն բռնի բերաւ յեղափոխական տրամադրութեան: Ո՞րն է դէպքն որում կ'ականարկեմ, կարող էք ասել: (Զայմեր: Մուսա Պէյն, Մուսա՛ն:) Այո՛, այո՛, Մուսայի դէպքն, զոր ես կը պատմեմ օտարականաց երբ կը բաղձամ մի քանի խօսքով ամեն բան հաուկցունել— Դրան անզգամութիւնն, Եւրոպիոյ մեղապարտ անտարբերութիւնն, Հայոց օրինական միջոցներով արդարութիւն ձեռք բերելու գուր ջանքն, Համիտի անհաւատալի մոլեռադութիւնն և հայասեցութիւնն: Կ'ասեմ նոցա թէ Մուսա վաւարանին մէջ գիշեր մի այրելով սպաննեց զՕհան որ կառավարութեան բողոքած էր նորա ոճիրներու դէմ. Մուսա սպաննեց Աղաճանի Հայրն և առեւանգեց զԿիւլիզար, սպաննեց զՄիրոյեան Մանուկ և քարին զարնելով սատկեցոյց Յակոբի երկու երախայքն, կոյսեր պղծեց, ոչխարի հօտեր յափտակեց, խոտի դէզեր այրեց, գիւղեր հրդեհի ճարակ տուաւ, և այլ

այսպիսի արարքներով քսան տարի զարհուրեցոյց Մշոյ դաշտն, և ինքն Կլատսթոն այդ ոճիրներու անդեկագիրն հրատարակեց Տէյլի Նիւզի մէջ, Եւրոպա քսոմնեցաւ ի լուր այդ խժոժութեանց, և սակայն Մուսա ձիով եկաւ ի Պուլիս, ի կառած բազմած գնաց յարքունիս, ներկայացաւ փատիչահին, բողոքեց Հայոց դէմ, արքայական զբօսանաւով չըջագացաւ Պոսֆորի վերայ, և կեղծ դատաստանէ մի յետոյ, որոյ ներկայ էին մեծ ու փոքր պետութեանց դեսպանք կամ քարտուղարներն, արձակուեցաւ անպարտ: 40 հոգիք Մշոյ դաշտէն յատկապէս եկած էին վկայելու Մուսայի դէմ, և բոլոր Հայ Ազգն և Եւրոպա կը յուսային թէ Մուսա կը կախուէր, և սակայն անմեղ հռչակեցաւ. և Հայք Համոզուեցան թէ օրինական միջոցներով բողոքելն, նոյն ինքն 15 դեսպանաց ներկայութեանն, ոգուտ չունի դատապարտել տալու մինչև իսկ Մուսայի նման հռչակաւոր և վաղածանօթ ոճրագործ մի. Համոզուեցանք ամենքս ալ թէ բոլորովին վերջացած է թուրք կառավարութիւն, և միայն աւազակութիւն, գողութիւն ու պղծութիւն կայ. թէ Համիտ թագաւոր չէ այլ չարագործներու պաշտպան, և թէ այնուհետև կը մնայ մեզ ոչ օրինական, բուռն միջոցներով զմեզ պաշտպանել և երբ հնար լինի՝ Հայաստանի համար բռնի կերպով բարեօք վարչութիւն մի հաստատել:

Թէպէտ 1878էն ծագեցաւ Հայոց ոմանց մէջ ապստամբական խորհուրդ, և թէպէտ 1881էն յետոյ սկսաւ խորհուրդն զօրանալ, սակայն 1889ին, Մուսայի անպարտ արձակման շնորհիւ է որ Հայ ազգն յեղափոխական ոգին առաւ: Ես կը կարծեմ թէ յեղափոխութիւնն Հայոց համար այն թուականէն ի վեր այլ ևս ընտրութեան և որոշման խնդիր չէ, այլ անձնական արժանապատուութիւն և փոքր ի շատէ հասկացողութիւն ունեցող ամեն Հայ բերմամբ դժպէտի հարկին եղած է յեղափոխական:

Յեղափոխական եմք և մեք, ի հարկէ, և սակայն ունիմք մեծ տարբերութիւն մի այն կարգ մի յեղափոխականներէն որք կը թուին կարծել թէ զարնելն փրկութեան անվրէպ միջոց մ'է, իբր թէ ապստամբական ցոյցերն մոգական ոյժ մ'ունենային Հայկական խնդիրն լուծելու ըստ մեր բաղ-

ձանայ: Մեք, ընդհակառակն, համոզուած եմք թէ բուռն միջոցներն կրնան մեծամեծ փնասներու պատճառ լինիլ առանց վերջնական յաջողութեան, եթէ ըստ արժանւոյն չդրուին ի գործ: Ոչ ապաքէն և դեղերն, նոյն իսկ ուժով և թուեաւոր դեղերն դարման են ինչ ինչ հիւանդութեանց. և սակայն ո՞վ չգիտէ թէ դեղն օգտակար անելու համար պէտք է գիտնալ հիւանդին սեռն, հասակն, անցեալ ախտերն, ուժերու ներկայ վիճակն, խառնուածն, կազմութիւնն, ծնողացն իսկ առողջական պատմութիւնն և ըստ այնմ տալ դեղն. ապա թէ ոչ այն նոյն դեղն որ կարող էր փրկել, կը սպաննէ: Դպրոցի և ուսման համար ալ նոյնն ճշմարիտ չէ՞, թէ կրնան օգտակար լինիլ կամ փնասակար, նայելով թէ ի՞նչպիսի ուսում կը տրուի և ի՞նչ եղանակաւ: Միթէ Խրիմեան Հայրիկ իւր «Դրախտի Ընտանիք» ի մէջ չբողոքեց թէ ուսմունքն, անդաստիարակ, առանց բարոյականի ուսմունքն, մեր պատանիներն յաւէտ վատթարացունելու կը ծառայէ: Եւ մեք ինչո՞ւ չեմք հասկանար թէ ապստամբութիւնն ալ կրնայ, դեղի և ուսմունքի նման, ծառայել փրկութեան կամ կորուսանելու, չինելու կամ քակելու, նայելով շրջակայեաց և իմաստուն կամ յախուռն և անսկզբունք եղանակին որով կը փորձուի: Ինչո՞ւ չեմք հասկանար թէ մեռցունել կայ որ քաջութիւն է և մեռցունել կայ որ վատութիւն. և թէ մինչև իսկ մեռնելու, ինքզինք զոհելու կերպ ու ժամանակ կայ որ աւելի փնաս կը բերէ ժողովրդին— թէ մեռնիլն ալուսնի իւր ծանր պատասխանատուութիւնն և անպատճառ դիւցազնական չէ միշտ: Ինչո՞ւ կը դժուարիմք համոզուելու թէ մեր ապստամբական կամ բուռն շարժումներն յաւէտ բարոյական նշանակութիւն պէտք է ունենան քան թէ զօրական և նիւթական, քանի որ մեր ուժերու և դրից պայմանք թոյլ չեն տար մեզ տեւական և յաղթական դիմադրութիւններ ընծայել օսմանեան զօրութեանց: Իմացէ՛ք, ուրեմն, սիրելի Հայրենակիցք, թէ մեք այս մտօք յեղափոխական լինելով հանդերձ, եմք նաև դիւանագիտական, զի համոզուած եմք թէ մեր խնդիրն ոչ լոկ յեղափոխութեամբ և ոչ լոկ դիւանագիտութեամբ կրնայ լուծուիլ. այլ թէ բուռն միջոցներն ի պատեհ ժամուն պէտք է առիթ ընծայեն դիւանագիտական ազ-

դու ջանից, զի մեր ժամանակներն մանաւանդ երբէք միջազգային խնդիր մի լոկ ուժով չէ լուծուած այլ միշտ դիւանագիտութիւնն ունեցած է կարեւոր բաժինն:

Վերջապէս, Տիկնայք և Տեարք, մեր Խրիմեան Լսարանին ոգին պիտի լինի կըրթակամ: Հոս պիտի ջանամք մեր մտքերն մշակել, մեր հասկացողութիւնն ընդարձակել և ըմբռնել թէ խնդիրներն պարզ չեն, թէ մեռնիլ կայ որ յանցանք է, թէ ուսումն բարոյականով օգտակար է, թէ բարոյականն քրիստոնէութեամբ վեհ է, թէ դիւանագիտութիւնն իմաստութեամբ, հայրենասիրութիւնն սիրով և առաքինութեամբ, ապստամբութիւնն հաշուով և խոհեմութեամբ կրնան ծառայել մեր ազգային վերածնութեան: Մեր գործ, մեր ազգային խնդիր շատ մեծ է, և մեք պարտիմք մտօք և հոգւով մեծնալ, ուժովնալ, կրթուիլ անդադար: (Երկար ծափք:)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

1794—1894 ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ

Հ Ա Յ Լ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԼՈՒՍԱՏԻՊ ՊԱՏԿԵՐՆ

ՀՄՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ ԼՐԱԳՐԻ ԽՄԱՎՐՈՒԹԵԱՆ

ԿՈՂՄԱՆԷ

Պատկերին մեծութիւնն է 50x35 սանտիմետր, տպուած 70x45 սանտիմետր քարտոնի վերայ: Ի կեդրոնի անդ դրուած է առաջին Հայ Խմբագրի՝ Տ. Յարութիւն քհ. Շմաւոնեանի պատկերն, և բոլորտիքն 1894 ին Հայերէն լեզուաւ հրատարակուող բոլոր Լրագիրներն իրենց խմբագիրներու պատկերներով:

Վիէննայի Միթիթարեան Միաբանութեան անունն իսկ հերիք է ցուցնելու թէ որպիսի գեղեցիկ ճաշակաւ պատրաստուած պէտք է լինի պատկերն: Հոն 31 Լրագիրներ կան, և 20 Խմբագրի պատկերներ:

Դիտելու արժան է այն ցաւալի իրողութիւնն թէ ի Թուրքիա հրատարակուող թերթերու 11ն մայրաքաղաքին մէջ ի լոյս կուգան և մին ի Զմիւռնիա, իսկ Հայաշատ քաղաքաց և Հայկական գաւառաց մէջ բընաւ ամենեւին Հայերէն թերթ չի հրատարակուիր: Բռնաւոր կառավարութիւնն չի թողուր որ Հայ ժողովրդային լուսաւո-

յութեան և կարծեաց առաջնորդներն ըստ
ժողովրդի մէջ անկեն իրենց հրազներն,
ուստի և շատ լայն այժմ ի զուր կը վստ-
նուի՝ հեռաւորութեան պատճառաւ չհաս-
նելով ժողովրդեան:

Պատկերին գինն է 4 Փր. (80 սէնթ).
փափաքողք պէտք է դիմեն առ խմբագ-
րութիւն «Հանդէս Ամսօրեայի» հետեւեալ
հասցէով—

Redaction de la Revue HANTES
Convent Mechitharist.
VIENNE. AUTRICHE

Նոյն հասցէիւ կրնան հրաման յղել Հ.
Փալէմբարիանի «Պատմութիւն Հայ Լրա-
գրութեան» գործոյն առաջին հատորին
համար, որ 1794էն մինչև 1860 թուականն
կը հասնի: Գինն է 60 սէնթ (2 ուկէս Փր.)

ՆԱՄԱԿ Ի ԿԻՂԻԿԻՈՅ

Ծովեզերեայ քաղաք... 27 Օգ. 1894

Պէյլան և Իսթէնէյրուն խիստ և կաս-
կածոտ հսկողութեան տակ են. իբր հա-
րիւր մարդիկ բանտարկեալ են Ատանա,
մեծ մասն բացարձակապէս անմեղ, միա-
ցածն ընդունվին մաքուր և միայն յաջ կա-
վարութեան դաւաճան: Դուք չէք կարող
երեւակայել թէ երկիրն ո՞րքան փոխուած
է այժմ: Ամեն մարդ ահի ու դողի մէջ է:
Եթէ ոք հարուստ է, զրպարտութեամբ
մի կը բանտարկեն և կը մերկացունեն յըն-
չիցն բոլոր: Թէ թուրք պաշտօնէից և թէ
նուստ Հայերու համար այս ընթացքն ե-
ղած է անսպառ աղբիւր հարստութեան:
Այս դրամական կորուստներու գումարն
ահագին է, բայց բարոյական փնասն աւելի
ևս ահագին է: Հակառակ այս ամեն զրկա-
նաց հարկ է հրապարակաւ աղօթել վա-
սըն կենաց այնր որ Մարգարէին յաջորդն
է և պետութեան անէծքն: Հարկահաննե-
րըն հանք հանողներու պէս երկաթ է և ա-
մեն գործիք կը գործածեն խեղճ ժողովր-
դի քսակին յատակն, և ստացուածոց յե-
տին մնացորդն հանելու: Ինչ ատալ ան-
բարոյական արարքներու կը ժպտնին: Թուր-
քըն ամեն բան անելու հրաման ունի: Ասոր
այլևս հանդուրժել անկարելի է: Բոլոր
ժողովուրդն, մանաւանդ մերն, գրեթէ կը
կը մեռնի տակու:

Կառավարութիւնն հիմա Ամերիկայէն
եկող Հայերն ետ կը դարձունէ: Այժմ վե-
քաղապետն անկարելի եղած է ինչպէս
յառաջագոյն երթալն եր: ՓՈԹՈՐԻԿ

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԵՄՍԵՆՑ

ԽՐԱՍԳԻՐ Մ.Ս. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

Հասցէ

Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.

U. S. America.

Կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է

ամեն երկրաց համար

երկու տալեր կամ տասն Փրանք

Կանխիկ

ՆԱՄԱԿ ՅԱՓԱՆՑ ԵՓՐԱՏԱՅ

3 Օգոստ. 1894

Համաճարակն իւր սոսկալի անուան ար-
ժանի ընթացք չունեցաւ մեր քաղաքում
աւելի ահ պատճառեց քան թէ մահ: Եւ
աւելի զոհ տարաւ մեր թուրք դրացիներ
ուն մէջէն այն պարզ պատճառաւ որ նո-
քա դեղի ու դարմանի կարեւորութիւն
չտուին, Ալլահ ինչ որ կամի, այն կը լինի՝
ասելով անհոգ ու անխնամ չարժեցան,
մինչդեռ Հայերն, փորձուածութեան առա-
ջին նշաններն դարմանելով և կերակուրի
խոտութիւն յանձն առնելով՝ բժշկուեցան
գրեթէ միշտ, աննշան թուով միայն զոհ
գնալով հետախտին: Մի քանի շարժի ի
վեր բոլորովին հրաժարած գնացած է մեր
հովատուն և պարտիզաւէտ քաղաքէն սյդ
անհաճոյ այցելուն: Բայց և այնպէս փնասն
մեծ եղաւ նիւթապէս: Շղթայ, քարան-
թինայ, երթեւեկի անլուր դժուարու-
թիւնք, վարձուց ողութիւն, ուտեստի
թանկութիւն շատ նեղեցին ժողովուրդն:
Ամենքն անցունելէ յետոյ այնքան անշահ
աշուն և անգործ ձմեռն՝ կը յուսային դար-
նանի երկար չունչ մ'առնուլ, սակայն ե-
ղան յուսավրէյ շարաշար. աղքատ և մի-
ջակարգ առեւտրականներն որք գիւղերն
կ'երթան, ամենքն փակուած մնացին ի-
րենց տներում, և հետեւապէս չկրցին ու
գեւորել չուկայի առևտուրն. այնպէս որ
ամեն դասակարգ պարապ և յուսաբէկ է
այժմ: Մեր շուկան այնքան լուռ և խա-

ղաղ է որ մարդուն քանն կուգայ, և քընացողին քունն ու է կերպիւ չի վրդովիր. այս մեր վիճակին չե՞ն նախածիր մեծ քաղաքներու աղմկոտ շուկաներուն մէջ գործանողներն: Հունձքերն միջակէ վար են ընդհանրապէս, ցորենն շատ աժնէ, չափն 80 դահեկանի կ'իջնէ կը կարծեմք ուրեմն սպասուած աժանութիւնն ալ չպիտի գայ: Շապին Գարահիսարի կողմն ալ հնտախտ երեւան ելած լինելով՝ դէպ ի Պոլիս ուղեւորող կարաւան մի ետ դարձուած էր և ի դարձին կողոպտուած էր աւազակներէ: Չարաղէտ անասն ծանր կոտորած տըռաւ Մալաթիոյ, ինչպէս կ'իմանամք: Կ. Պոլսոյ երկրաշարժն ալ նոր և ահագին հարուած մ'էր ոչ միայն մայրաքաղաքին այլ և զաւառաց, և մասնաւորապէս մերինն նման քաղաքաց, որք հաստատուն կալուածներ ունենալով հոն՝ անոնց եկամտով ըստ մասին կ'ապրէին. այդ կալուածներ շարժէն խարխլած կամ կործանուած լինելով վերաշինութեան ծախք կը պահանջեն: Կան ալ որոց խանութին մէջի ապրանք ևս փնտսուած է: Կալուածատէր լինին խկ ապրուստի ապահով միջոց չէ ուրեմն— տխրա՛գին մտածութիւնն արդէն տխուր ժողովրդեան համար: ԺԱՅՌ

ՆԱՄԱԿ ԹՐՈՑԵՆ

22 Սեպտ. 1894

Թրոյի հայ գաղթականութիւնն ամսոյս սկիզբները բարոյական խնճոյք մի վախելեց, որ էր «Հայք»ի Մեծայարգ Խմբագրին այցելութիւնը: Հիւանդութեանը պատճառաւ օգափոխութիւն ընելու պատուէր տուած էր ինքն իրեն և մեր կողմը ընտրած էր բարեբաղդարար: Իրաւ որ Թրոյ մաքուր օդովը և շրջակայից գեղազուարճ բնական տեսարաններովը Հայաստանի մէկ անկիւնն կրնայ յիշեցընել պանդուխտներուս:

Մեր հիւրը մեր օդէն ու մտրդապարզ բլուրներէն օգտեցաւ, մինք ալ իւր խօսքերէն, որոնց ամէն մէկը անեղծանելի սերմի պէս ինկաւ մեր սրտերուն մէջ և իւր Սեպտ. 9ի աստենախօսութիւնը իբրեւ կենսաբեր ջրի վտակ հոսեցաւ ու ոռոգեց մեր հոգիները: Նոյն օրը, բազմոցին վրայ ընկողմանած, հազիւ կրնար խօսակցու-

թեան շունչ օգտեցնել, և ահա երեկոյին ձէրմանիս Հօլում, երբ տիկնայց և երիտասարդաց բազմութիւնը տեսաւ, կարծես թէ առիւծ դարձաւ, և ասկեղինիկ լեզուովը, հայրենասէր ոգւովը ու աստենախօսական զօրութեամբը զմայլեցուց ու բոցավառեց մեր ամենու հոգին:

Մենք շատ ու շատ շնորհակալ եղանք այն բացատրութիւններէն ալ որոնք ընդունեցանք առանձին խօսակցութեան մէջ իբրեւ պատասխան մեր հարցմանց, այնպիսի հարցմանց որ ոչ կրնան հարցուիլ և ոչ պատասխանուիլ հրապարակաւ և լրագրի միջոցաւ:

Կուգամ, արդ, Մեծ Տէր. իմ և բոլոր Թրոյաբնակ հայրերակիցներու շնորհակալութեան և խորին յարգանաց հաւատարմք մատուցանել Ձեզ հրապարակաւ և կը մընամ ձեր անձնուէր և խնայարհ եղբայրն—
Խ. Ա. Զ.

ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Եւ մեք հրապարակաւ կը մատուցանեմք մեր շնորհակալութիւն Թրոյաբնակ բոլոր մեր հայրենակցաց, և մասնաւորապէս այն խմբին որ փառաւոր սենեակ մի դրաւ մեր տրամադրութեան տակ Ամէրիքըն Հօթէլի մէջ, հակառակ մեր պնդելուն թէ բազմաժախ պատիւներ չէինք ուզեր: Նոյնպէս մեր շնորհակալութիւնը կը մատուցանեմք Տիար Տիգրան Թէյլըրի և ազնիւ ընտանեացն որք ճշմարիտ հայկական ջերմութեամբ հիւրասիրեցին զմեզ բազում անգամ: Քաղցր յիշատակօք լեցուած վերադարձանք Թրոյէն:

ԸՄԵՐԻՎԱՅԻՔ

ԵՒ

ԸՄԵՐԻՎԱՅԻ ԷՆՅԵՐՆ

Կարեւոր հարց մ'է թէ Ամերիկացիք ի՞նչ համարում կամ կարծիք ձևացուցեր են Հայոց մասին, զո՞չ են հայ գաղթականութենէն թէ ոչ:

Պէտք է խոստովանիլ նախ թէ Ամերիկացիք օտարատեսայ չեն, զի գիտեն թէ իրենք ալ մեծ մասամբ ոչ-անգլիական օ-

տար ազգերու սերունդ են: Հայոց հետ նոքա ի սկզբան մեծ համակրանք վարուած են, որպէս մեր հնագոյն գաղթականաց պատմութենէն կը տեսնուի: Մինչև քիչ տարիներ առաջ ալ ուր որ Հայերըն նոր էին ու սակաւթիւ, դեռ համակրելի էին: Ուստի, Թրոյի և այլ քաղաքաց Հայերն առաջին մի քանի տարիներն սիրուած են, գործ ունեցած և յաջողած են. բայց երբ առաջիններուն յաջողութեան համբաւն աւելի մեծ բազմութիւն մի քաշեր է դէպ յԱմերիկա, բանը բոլորովին փոխուած է: Ի ներկայիս, Ամերիկայի ո՛ր քաղաքին մէջ որ Հայերու բաւական խոշոր թիւ մի կայ, հոն Հայն անպատիւ է:

Հոս փափուկ կէտ մի կայ բացատրութեան կարօտ: Ամերիկացիք արդեօք մէկ կամ երկու Հայ անհատի անպատիւ արարքին համար ամենէ՞ն ալ կը զգուին, թէ Հայոց մասին իրենց վատ համարումն արդարացունելու շափ անախորժ և ազեղ երեւոյթներ դիտած են նոցա մէջ:

Այդ կէտն պարզելու համար պէտք է իրողութիւններն աչքի առջեւ բերել: Յիշել պէտք է թէ Ամերիկայի հայ գաղթականք մեծ մասամբ գիւղերէ եկած կոշտ և տգէտ մարդիկ են, ինչպէս անմշակ գեղջուկք սովորաբար կը լինին: Նոքա Ամերիկա չեն գար ուսանելու կամ առեւտրական տուն հաստատելու կամ երկիրն ուսումնասիրելու համար՝ նման այն Հայերուն որք կ'երթան ի Բարիզ, ի Մանչէսթըր կամ ի Մարսիլիա: Բնական է որ Բարիզի և Մանչէսթըրի Հայերն, պատուաւոր վաճառականներ, կրթուած և կուկուած անհատներ, լինին յարգելի առաջի բնիկներուն: Բանն գլխովին սարբեր է Ամերիկայի Հայոց մասին, որք առանց զբրամագլխի, առանց փորձառութեան, յաճախ առանց պարզ կարդալ գրել գիտնալու, միայն զոյգ մի բազուկ գործի ունենալով կը վազեն կուգան ստորին գործաւորութեան շրջանն մտնելու բաղդին ի ինդիոս:

Ոչ ումք գաղտնիք է թէ թրքահայք օտմ. լծին ներքև չափազանց խոնարհած, ծռած են, և կեղծաւորութեան, սուտ յարգանքի և պատիւ երեւոյթներու շնորհիւ կրցած են իրենց գոյութիւն պահպանել: Այսպէսով բազում անհաճոյ և գարշելի տարրերով ապականուած է նոցա բնաւ-

րութիւն: Միթէ զարմանք է եթէ նոցա այդ տգեղ բնաւորութիւն կ'երեւի և կը յայտնուի Ամերիկացւոց: Փոքր ի շատէ կրթուած Հայերն մասամբ ազատուած կը լինին այդ թերութիւններէ և կամ խնամով կը ծածկեն զայնս օտարներէն, բայց կոպիտ գիւղացին մերկապարանոց կը կենայ յատարին առջեւ. ազգային պատուոյ զգացում, անհատական վեհանձնութիւն անծանօթ են նմա: Այս թշուառներուն փեճակն բոլորովին ողորմելի կը դառնայ երբ շարաճճի Հայ մի կը գրգռէ զիրենք գծուծ հակառակութեանց, ապուշ գործադուլի, անվայել դատաւարութեան և այլ այդպիսի գործերու: Չուառ գեղջուկին ստորնագոյն միառումներն ոյժ և քաջաւեր կը գտնեն այդ «սասանայ» կամ «փորձիչ» Հայերէն և գետնաքարէ կ'ստանդի ցած գործողութեանց մէջ:

Ընթերցողներն յիշեն գուցէ այն կռիւներն և վէճերն որք Հայոց ժողովոց մէջ յաճախ տեղի ունեցած են. ապաքէն այդպիսի դէպքերու պատմութիւնն ալ երկար և անպատիւ գլուխներ կրնային կազմել. Ուստի մէջ անցեալ տարի իրարու գլուխ և քիթ ջախջախ Հայեր ի ժողովի և ոստիկանութիւնն միջամտել ստիպեցաւ. ուրիշ քաղաքաց մէջ ալ տեղի ունեցած են աւելի կամ նուազ կարեւոր ընդհարումներ: Եւ այս կռիւներու անպատիւ հանգամանքն յայնմ է որ անարժէք, չընչին խնդիրներու համար եղած են, մինչ ուրիշ ժողովրդոց մէջ աւելի լուրջ պատճառներէ կը ծագին այդպիսի պայքարք:

Ամերիկացւոց առջեւ Հայ անունն արհամարհ գործող դէպքերն զանազան տեսակէ են և դժբաղդաբար յաճախադէպք Հայերու մէջ տիրող յոռի միտում մի կայ. այն է դատ վարելու, կառավարութեան դիմելու միտումն, որ Թուրքիոյ մէջ արդէն ծանօթ է և Ամերիկայի Հայոց մէջ ալ չէ զուպուած ու է նկատողութեամբ: Ընկերութեամբ կը բնակին մէկ սենեկի մէջ, և երբ մէկուն դրամն կորսուի, ընկերներէն մին կամ միւսն գողցած կը համարուի, և ատկէ կը ծագի վէճ, գանգատ և դատաւարութիւն: Երբեմն չնչին գումարի համար երկու կողմէն փաստաբանի և այլ ծախուց համար տաճանապատիկ աւելի մեծ գումարներ կը վառնեն, թո՛ղ կորսուած ժամանակն և մտքի տանջանքն: Եւ հաշուեցէք թէ այդպիսի դա-

տախազութիւնք ինչպիսի տխուր պայմանաց մէջ կ'երեւցունեն հայութիւնն. դատախազն հայ է ամբաստանեալն ալ հայ է. գումարն շնչին է և եռանդն ու կիրքն ահագին. այսօր այսպէս կը պատմէ դէպքըն ու երկու օր յետոյ ուրիշ կերպ, և փաստաբանն կը շուարեցունէ. ո՞րն է ճշմարիտ. առաջի՞ն տեղեկագրութիւնն թէ երկրորդն. պատասխան կը տրուի թէ եկրորդն է ճշմարիտ, որով յայտարարած կը լինի թէ առաջինն սուտ էր. բայց ի՞նչպէս վստահի փաստաբանն այն մարդուն այսօրուան խօսքին որ երկու օր առաջ սուտ խօսած էր: Ալ ինչ առնք այն ամբաստանութեանց համար որ բոլորովին զրպարտութիւն են: Օրինակ մի յիշեմք որ ընթերցողք համոզուին թէ Ամերիկացիք կասկածելու ո՞րքան իրաւունք ունեցած են մեզ դէմ: Հայ մի ամբաստանեց ուրիշ Հայ մի թէ 800 տղար գողցած է իւր թիկնոցի ծոցէն զոր կախած էր սենեկին պատէն: Ամբաստանեալն ձերբակալուեցաւ, դատուեցաւ և անպարտ արձակուեցաւ. դէպքն լրագրաց մէջ հռչակուեցաւ ի մեծ գաղթակցութիւն հանրային կարծեաց ի մասին Հայոց: Այս դէպքին մէջ զրպարտութիւնն ամեն ուրիշ յոռութեան հետ ապշութեամբ ևս արատաւոր է, զի դատախազն 800 տղար չէ ունեցած երբէք, որպէս դրամատան հաշիւէն երեցած էր, և մարդ իւր բոլոր հարստութիւնն թիկնոցին ծոցն դնելով զայն չի՛ կախեր գործարանին մէկ սենեկին պատէն, եթէ այնպէս անէ սք, յիմար է արդէն, և երբ այդպիսի յիմարութիւն մի արած լինելու յիմարագոյն սուտն ալ խօսի և զրպարտութիւն կարկատէ, հարկաւ լսողներն զգուանօք կը քստմնին:

Այս երկրին մէջ ալ կան ոճրագործներ, չարարարներ, խաբեբաներ ամենակատարեալ տեսակէն, բայց պէտք է գիտնալ թէ ընդհանուր ժողովրդի բարոյական ըզգացումն և բնաւորութիւնն շատ աւելի բարձր է քան գարեւելեանոց ժողովրդն— Թրքաց, Յունաց, Հայոց, Հնդկաց, Չինաց, Ճաբոնացւոց: Ամերիկայի մէջ չարն չար է և բարին բարի, իսկ յԱրեւելս բարոյական թուլութիւնն, ստախօսութիւնն, կեղծաորութիւնն, բանսարկութիւնն ժողովրդային հանրախտեր են, գրեթէ ամեն մարդ չափով իւրիք վարակեալ է, և այդ պատճառաւ ալ բնական է որ այդ ախտերէ

բռնուած մարդիկն մատնանիշ և անպատիւ չլինին հոն, բայց երբ յԱմերիկա գան նոքա բաւական թուով, այս տեղի ժողովրդին քով որոշ կ'երեւի իրենց տարբերութիւնն, և մատնանիշ կը լինին ու կը արհամարհուին: Հայոց մեծ մասն այս տարբերութեան իրազեկ չեն թուիր: Մեք կը խոստովանիմք, թէպէտ այս խոստովանութիւն ազգասիրական չ'երեւի թեթեամտաց, թէ Ամերիկայի հայ գաղթականութեան մինչև անգամ բարձր համարուած դասակարգին մէջ բարոյական արժանապատուութեան զգացումն շատ ընդացած կը մնայ, այնպէս որ իրենց ընկերութեանց մէջ ծանօթ խաբեբաներ, լիւրս գրպարտիչներ անդամ կ'ընդունուին, անդամութենէ չեն արտաքսուիր, և մինչև իսկ պատիւ ու պաշտօն կ'ընդունին:

Պէտք է մեր հայրենակիցներն գիտնան, լաւ գիտնան, թէ այս երկրին թուրքիա չէ: Անազնիւ գործն, սուտն ու ստորութիւնն հարիւր անգամ աւելի անպատիւ են հոս քան յԱրեւելս: Եւ եթէ մեք կ'ուզեմք որ մեր անձնական ու ազգային պատիւ, շահ և գործոց յաջողութիւն վերտանգէ ազատին, պարտիմք կրթութեամբ և բարոյականով բարձրանալ:

Մեք յուսահատ չեմք Ամերիկայի Հայոց ապագայէն, բայց կը զգամք թէ շատ աշխատիլ պարտին հասկացող անհատք տխմարաց համար. ս'առաջնորդ Հօր և ամեն գաղթականութեան մէջ գտնուող մի քանի զգօն անհատներու պարտքն է չթողուլ որ մեր գիւղացի եղբայրներ այս կամ այն չարաբարոյ անհատէ մղուելով ինան խոտառակ հակառակութեանց և ըսպառիչ դատաւարութեանց մէջ «Փորձիչ»ներուն կամ սատանաներուն դէմ թող գտնուին քաջ քահանայք, որպէս առածն կ'ասէ «մէկը մէկուն քահանայ, մէկը մէկուն սատանայ»: Մեր փորձառութիւնն ի թրոյ, անցեալ չաբթու, քաջալերական է, զի կը ցուցնէ թէ մեր տգէտ եղբարք ալ խօսք կրնան հասկանալ և բանաւոր ընթացքի վերադառնալ եթէ անկեղծ խրատողի հանդիպին:

ՀԱՅՔ

ՕԼՊԸՆԻԻ ԿՐԷՆՏ ՃԻՒՐԻՒՆ ԱՌՋԵՒ

Սեպտեմբի կիրակի օրն թրոյի Հայոց ատենախօսած լինելէ յետոյ, հետեւեալ օրն դէպ ի Սարաթովա մեկնելու կը պատրաստուէինք երբ պատմեցին մեզ դժբաղդ դատավարութեան դէպք մի, որով Հայ երիտասարդ մի երկու ամսէ ի վեր ի բանտի էր: Դէպքն տեղի ունեցած էր թրոյ քաղաքին մէջ, ուրկէ հանուած էր Օլպընի—նիու Եորք նահանգի մայրաքաղաքն— և 14ին, ուերաթ օրն, պիտի քննուէր Կըրէնտ ձիւրիէն: Յուսալով թէ հնար կը լինի դատին և անոր յարակից անպատեհութեանց վերջ տալ, հրաւիրեցինք թրոյի Հայոց հասկացող անհատներէն մի քանին, ամբաստանն և ամբաստանելոյն ազգականքն, և յետ երկար յորդորանաց յաջողեցանք համոզել ամբաստանն որ ձեռնթափ լինի դատէն, որոյ պատճառաւ Հայոց մասին անպատուարեր հրատարակութիւններ եղած են ու պիտի լինէին ամերիկեան մամուլին մէջ: Երիտասարդն համոզուեցաւ: Սակայն հարկ եղաւ որ մեք, անսալով ներկայից թախանձանաց, մնայինք և անձամբ աշխատէինք գաւառային դատախազին և Կրէնտ ձիւրիին բով: Գնացինք ուրեմն յաջորդ օրն, Գչ., յՕլպընի, տեսնուեցանք դատախազին հետ: Եւ ապա, ուրբաթ օրն, նորէն գնացինք և ամբաստան Հայուն և նորա վկային թարգման կանգնեցանք առաջի Կրէնտ ձիւրիին:

Դէպքն գողութեան դէպք մ'է. խումբ մի Հայեր Հըտսըն գետն լողնալ են գնացեր. և մին, Ղուկաս Չարչեան, ջրէն ելնելուն կը տեսնէ թէ սոնազգեստի գրպանէն գողցեր են քսակն, որ ոսկի և թղթադրամ կը պարունակէր, իբր 70 կամ 80 տոլարի արծողութեամբ: Կը խուզարկէ ընկերներուն զգեստներն, ոչ ինչ կը գտնուի. կը յուզեն աւագն ալ, և պարապ քսակն երեւան կ'ենէ: Կիրակոս, լողնալու ատեն, ուրիշներէն առաջ ջրէն դուրս ելած և աճառ բերած է եղբր, ուստի և Ղուկաս գնա կ'ամբաստանէ իբրեւ գող: Այս է դէպքին հակիրճ պատմութիւնն, զոր թարգմանեցինք անգլիերէնի ի լուր երդուելոց ատենին՝ ըստ հարցմանց գաւ-

առայլն դատախազին: Եւ յայտարարեցինք թէ Ղուկաս այլ ևս դատ չունի:

—Ինչո՞ւ, ի՞նչպէս կը լինի որ դատէն ձեռնթափ կը լինի, հարցան:

—Տեա՛րք երդուեալք, պատասխանեցի, դորա պատճառն ես եմ: Ես յորդորեցի ամբաստանն ի ներկայութեան թրոյի Հայ երեւելեաց որ թողու դատն, բացատրելով թէ մեր ազգի անունն արդէն բաւական արատաւորուած է Ամերիկայի Հայ գաղթականաց ոմանց չնչին կոիւններուն և անկարեւոր դատավարութեանց պատճառաւ, թէ չարամիտ մի քանի Հայերու չահախնդիր գրգռներուն խաբուելով մեր պարզամիտ գիւղացիներն Ամերիկացւոց թիւր գաղափար տուած են Արարատեան երկրի զաւակաց նկատմամբ: Նոքա խոտացան թէ պիտի խորշին ու գարշին յայսմ հետէ անվեհանձն կոիւններէ և պիտի ջանան կրթուիլ ու արժանաւոր քաղաքացիներ լինիլ այս մեծ պետութեան ու ազգին...:

—Դուք ևս հայ էք:

—Այո՛, Տէր, Հայ եմ ցեղով. թէպէտ Ամերիկայի քաղաքացի լինելու պատիւն ունիմ:

Դատարանին մէջ և դուրսն շատ հետաքրքրութեամբ խօսեցան մեզ հետ գաւառային դատախազն և իւր օգնականն, Հարցան «Հայք» ի մասին և ինդիքցիին օրինակ մի, Հայերէն լեզուի մասին՝ և իմացան թէ ինչ լեզու է, և մեք առիթ ունեցանք թրքաց «բարեխնամ» կառավարութեան անհաւատալի արարքներուն վերայ գաղափար տալ:

10 վայրկեանէն լուր տրուեցաւ թէ բանտարկեալ Կիրակոս պէտք է արձակուի և 5 վայրկեան յետոյ ուրախագէմ երիտասարդն մեր առջեւն էր: Խորին շնորհակալիք մատուցանելով գաւառային դատախազին որ այնքան ազնուութեամբ վարուեցաւ մեզ հետ, առինք արձակեալ Կիրակոսն ու վերադարձանք ի թրոյ:

Թէ՛ ամբաստանին և թէ՛ ամբաստանելոյն շատ խրատ տուինք ինչպէս բոլոր ուրիշներուն որ զգուշանան այնպիսի սգեղ հակառակութենէ, շանտան բանասարկութալիս իրենց, և խաղաղասէր և սիրալիր վարմունք ունենան իրարու հետ: Ի՞նչ ցաւալի բան է որ մենէ շատերն ազգային կամ բարեսիրական նպատակներու համար երկու երեք տոլար չեն կրնար տալ,

բայց իրենց կասկածեալ ընկերն բանտի մէջ փտեցունելու համար երկու-երեք հարիւր տոլար ծախք անել կրնան: Ո՛չ, եղբայրներ, ո՛չ, արդարութեան և իրաւանց համար մեր կիրքն ու սէրն աւելի ազնիւ կերպերով պէտք է ապացուցանեմք:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—Օրէնսգիտութեան և բժշկութեան վարժարանաց ուսանողներուն գաղտնի մէկ ընկերութիւնն երեւան ելած է օրերս ի Կ. Պոլիս. մի քանին փախած են յԵւրոպա, և 20—25 անդամներ ձերբակալուած են: Բոլորն ալ թուրք են: (ԹԱՆ)

Ո՞Ր ՄՆԱՑԻՆ ՀԱՅ ՃԱՄԲՈՐԴՆԵՐՆ

Պոսթոնի Կլօպ թերթն Կ. Պոլսէն Հայու մի ուղեալ նամակէ մի կտորներ հրատարակած է, յորմէ հետեւեալ հազիւ հաւատալի տեղեկութիւնն կը թարգմանեմք. — Թղթակիցն կը պատմէ թէ Ամերիկայէն վերադարձող 45 Հայերու խումբ մի ի Պոլիս հասաւ, անցագիր չունենալով, ցամաք ելնելէ արգելուեցան, պաշտօնեայք նաւ դռնացին և անոնցմէ վեցն բռնի առին տարին նետեցին ի բանտ: Իսկ մնացած 39ի մասին յայնմ հետէ լուր չկայ: Նաւն մի քանի օրէն ետ դարձաւ, բայց Հայերն ոչ դուրսն երեւցան և ոչ նաւուն մէջ գտնուեցան: Կր կարծուի թէ ջուրն նետուած կամ ուրիշ կերպով սպաննուած են: Նոյն աղբիւրին նայելով՝ Նիու Եորքէն գնացած 35 հոգիէ բաղկացեալ ուրիշ խումբ մ'ալ 3 ամիս առաջ ետ դարձուած է, ամերիկեան անցագիր ունեցողներն ալ չունեցողներուն հետ ի միասին:

ՀԱՅՈՑ ԿՌԻՒ Ի ՓՐՈՎԻՏԷՆՍ

Նոր և աւելի արիւնայեղ կռիւ մի անդի ունեցած է Փրովիտէնսի Հայոց մէջ, Սեպտ. 23ին, որոյ նկարագրութիւնն Պոստոնի Տէլի Կլօպին մէջ մանրամասնեալ կը գտնեմք: Ընդհարումն պատահած է կիրակի աւուր ժողովին մէջ ուր պիտի որոշէին թէ Պոսթոնեա՞ն կամ Ուստրեան առաջնորդին պարտ էին հետեւիլ, (Թուի Հընչակեանց թէ Տնտեսական Միութեան:) Իբր 400 հոգի ներկայ էին, և վէճն փոխուելով ի կռիւ, իբր 15 վայրկեան տեւեց մարտն, ոչ միայն սրահին մէջ այլ և սան-

դուխներուն վերայ և դուրսն: Աթոռի թեւերով, դանակներով, խարտոցներով և բռնցի հարուածեց եղբայր զեղբայր, և արիւնն առատօրէն հոսեցաւ: Երբ ոստիկանք հասան, սրահն կտրասեաց ջախջախեալ բեկորներով ծածկուած գտան, և մի քանի վիրաւորեալներ գետնատարած, և աւելի շատեր արիւնաթաթաւ: Թ. Յ. ի գլուխն ձեղքուած էր խարտոցի հարուածով, նոյն պէս Մ. Ս. ին: Վեց հոգիք ձերբակալուեցան:

Օգ. 27ին Ուստըրէն մեզ ուղղեալ էին երկու նամակներ 26ի հանդիսին վերայ, որք հասան մեզ երբ արդէն Սեպտ. 1ին թիւն ընդ մամլով էր: Ստիպուած՝ թողուցինք ներկայ թուոյ: Ահա նամակներուն բովանդակութիւնն:

«Օգ. 26ին Ուստըրի Հայ գաղթականութիւնն տօնեց Ս. Փ. Եկեղեցւոյ շինութեան և Թանգարանի հաստատման տարեդարձը: Հ. Սարաճեան Նիու Եորքէն յատկապէս հրաւիրուած լինելով պատարագ մատոյց առաւօտուն: Հանդէսին ներկայ էին 500է աւելի բազմութիւն մի: Սրահին ճակատը կը կենար Հայրիկին պատկերը դալարեօք և ծաղկօք շրջանակեալ. հոս հոն կը տեսնուէին նշանաւոր ազգայնոց պատկերներն. սրահին մէջ տեղն կը կենար երկայն սեղան մի որոյ վերայ կը տեսնուէին ամեն Հայերէն թերթեր, և փոքրիկ բայց լեցուն Թոնգարանն կը փայլէր սրահին ճակատն:» Ա. և Շ

—Նիու Եորքի Հայկական Միութիւնն վերսկսած է իւր ժողովներ: Սեպտ. 15ի նստին մէջ վիճարանութեան նիւթ արած են այն խնդիրն թէ «Գաղթականութիւնն ազգի մի գոյութեան կը սպառնայ:»

—Ուստըրի Հայոց նախորդ առաջնորդ Հ. Սարաճեան վարդապետն մեկնեցաւ Միացեալ Նահանգներէն դէպ ի Ռուսիա:

—ԽՐԻՄԵԱՆ ԼՍԱՐԱՆԻ բացումն տեղի ունեցաւ Սեպտ. 1ին, և գոհացուցիչ էր տեսնել թէ պատկառելի բազմութիւն մի փութացած էր ներկայ լինիլ:

Երեկոյին գլխաւոր ճառախօսն էր Տիար Գր. Գաւապրեան, որ Ռաֆֆիի «Խենթ»ին վերայ մատենախօսութիւն մի կարդաց: Ճառին ընթերցումն տեւեց իբր 40 վայրկեան, և ունկնդիրներէն շատերն անշուշտ որոշեցին կարդալ «Խենթ»ն որոյ ճարտար շինուածին և գլխաւոր խորհուրդներուն վերայ գաղափար առին:

Կը խնդրեմք որ մընի օրաըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ ֆիսին Station E. (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

INTERNATIONAL CLINIC

111 Sand St.,

Brooklyn.

ՊՐՈՒԲԼԻՆ

Պրուբլինի կամրջին մօտիկ, ամեն օր բաց է այս տիպէնսէրին կամ դարմանատունն թէ ներքին և թէ վիրարութեական հիւանդութիւններ դարմանելու համար։ Տոբթոր Զ. Բ. Թեոդորեան յանձն առած է Հայոց ճրի բժշկական քոնսլթոյ տալ երկուշարթի, չորեքշարթի և ուրբաթ օրերն, կէս օրէն յետոյ ժամ 2էն մինչեւ 4ը։ Բոլոր կառքերն ու օդաչու կառախմբերն այս դարմանատան մօտ կերթան թէ Պրուբլինէն և թէ Նիւ Եորքէն։ 111 Սէնտ Սթրիթ, Պրուբլին։

ԳԱՌՆԻԿ ՏԵՕՔՄԷՃԵԱՆ

Յանձնակատար-գործակալ

ամեն տեսակ

Գրական և տպագրական արտադրութեանց

և ևն. ևն.

Հաստատուաւ 1890 ի Ռուսոնք

«Հայքի» խմբագր. տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով։

Ա. տարի, 1 տոլար 50 սէնթ կամ 7.5 Փր.

Բ. " 2 " կամ 10 Փրանք։

Գ. " 2 " " " "

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27ր և 28ր փողոցաց միջև

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7ր Էվինիու

Նիւ Էորք

26ր և 27ր փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԱՐԲ

Յ. Է. Բ. Բ. Բ.

EKIZIAN BROTHERS

30 Eddy St.

Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ալ աւելի զոհողութիւններ աւնեմք։

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբ կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուններու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ գներով։

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուղարկութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք։

Մ. Ս. Թ. ՆԵՀԻԿԵՆ

ՈՒՍԹԸՐ ՄԱՍ.

Ամերիկայի մէջ 12 տարուան երկար փորձառութիւն ունենալով ամենայն դիւրութիւն կ'ընծայեմք մեր Հայրենակցացը փոխանակագիր տալու մասին, Թուրքիոյ այլ և այլ կողմերը և Եւրոպիոյ բոլոր գլխաւոր քաղաքաց մէջ: Մեր փոխանակագրերու ապահովութեան մասին Հայրենակիցք արդէն տեղեակ են անցեալ 12 տարուան մեր ընթացքէն: Նաև նաև թիքէթ կուտամք ասկէ Եւրոպա կամ Թուրքիա երթալու գոհացուցիչ գներով ու է գծով, և մասնաւորապէս կը յանձնարարեմք American Line (Ամէրիքըն Լայն) կոչուած գիծն, որ կը պարունակէ Սիթի Օվ ֆաւրիք և Սիթի Օվ Նիթի եւ Ռիֆ կոչուած ամենապատուական և ամենաարագ նաւերը, որ ամեն չորեքշաբթի ժամ 11ին ճամբայ կ'ընեն Նիու Եորքէն:

Աստուածաշունչ (աշխարհաբար) այլ և այլ մեծութեամբ և Աւետարան, և այլ կրօնական գրեանք կը վաճառեմք գրեթէ Կ. Պոլսոյ մէջ ծախուած գներովն, նաև գիտական և պատմական ու է գիրք կրնամք շատ կարճ ժամանակի մէջ բերել տալ եթէ հրաման ընդունիմք:

Ամեն նամակներու մեր անմիջական ուղարկութիւնը կուտամք ինչպէս սովորութիւն է:

Մեր Հասցէն— M. S. T. NAHIGIAN

P. O. B. 478, Worcester, Mass.

Ահա գերձակ մի որ ամեն տեսակ զգեստուց պատուական կը շինէ իրատ չափաւոր գնով, ինչպէս որ մեր Հայրենի ոմանք փորձով տեսած և զարմացած են: Նիւթերն ընտիր են և ձեւերն վայելուչ: Փորձեցէք և տեսէք

PERFECT FIT GUARANTEED BY OUR OWN ADAPTION OF THE ENGLISH AND FRENCH SYSTEMS OF CUTTING

LONG DOVE-TAIL FROCK SUIT

DOUBLE BREASTED SACK SUIT

SINGLE BREASTED SACK SUIT

SOFT ROLL SACK SUIT

ALL GARMENTS MADE BY US KEPT IN REPAIR FOR 1½ YEARS FREE OF CHARGE.

THE WESTMINSTER


COPY RIGHTED.

THE LATEST HIGH CLASS \$15 TO ORDER POSITIVELY WORTH \$40.

MADE OF THE FINEST GRADE OF IMPORTED CLAY DIAGONALS, THAT WILL NOT GLOSS; VICUNA CHEVIOTS PLAIN OR RIBBED; SCOTCH FANCY MIXED CHEVIOTS AND WORSTEDS, FRENCH CASSIMERES, TWEEDS AND A FULL LINE OF OTHER FASHIONABLE GOODS.

COHEN & CO. FRENCH TAILORS

27 & 29 ANN ST. ONE DOOR WEST OF NASSAU. NEW YORK



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուղղներուն: Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի թուրքիա կամ Ռուսիա տանելու: Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակին կը գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին: Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է: Ամենէն լաւ գիծը գիտցուած է Ֆրէնչ ԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք: Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և ածան գնով:

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն: Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ քսեն թէ ուրիշներէն ածան կուտանք: Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է: Աստի ստակ և տոմսակ թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուղղներ կամ տեղեկութիւն ուղղներ կրնան դիմել հետեւեալ հասցէին:

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին:

D. M. SHOOSHAN

41 Exchange St., Worcester, Mass.

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձեւերով բացասրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կմ 2 ու կէս ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊՍԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»-ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կմ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Բաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակառակ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն: Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

ԱՐՈՒԵՍ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21

դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէս կամ 5 ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւ Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ